

# ՀՈՒՇԱԹԵՐԹ ՊԱՅԻԵՆՏԻ ՀԱՄԱՐ,

Ընդունող Ռիվարոքսաբան  
(Զսարելտո)\* ըստ հետևյալ ցուցումի

«Պլանային կարգով կոնքազդրային  
կամ ծնկային հողի պրոթեզավորմամբ  
չափահաս պացիենտների շրջանում  
երակային թրոմբոէմբոլիայի  
կանխարգելում»

\*Միայն բժշկի նշանակմամբ

Տեղեկատվական նյութը պատրաստվել է բացառապես բժշկի նշանակմամբ 10 մգ ռիվարոքսաբան (Քսարելտո) օգտագործող պացիենտների համար:

Տեղեկատվական նյութը պատրաստվել է ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումների շրջանակում և չի հանդիսանում գովազդ:

Պացիենտի անուն,  
ազգանուն, հայրանուն \_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_

Բժշկի անուն,  
ազգանուն, հայրանուն \_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_

Հաստատության անվանում,  
հեռախոսահամար \_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_

# ԻՆՉ Է ԹՐՈՄԲԸ

---

**Թրոմբը արյան խիտ մակարդուկ է, որը առաջանում է արյունատար անոթներում:**

Թրոմբի մի մասը կարող է պոկվել իր առաջացման տեղից և, շարժվելով արյունատար անոթների երկայնքով, խցանել դրանք մեկ այլ հատվածում: Այս երևույթը հատուկ բժշկական տերմինով կոչվում է «թրոմբոէմբոլիա»:

Կոնքազդերային կամ ծնկային հոդի փոխարինումից հետո կարող է որպես բարդություն առաջանալ **երակային թրոմբոէմբոլիա:**

# ԻՆՉՈՒ Է ԿԱՐԵՎՈՐ ԽՈՒՍԱՓԵԼ ԹՐՈՄԲԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԻՑ

---

Թրոմբը վտանգավոր է, քանի որ կարող է խանգարել կամ ամբողջությամբ արգելափակել արյան հոսքը անոթներում:

Ստորին վերջույթների խոշոր օրթոպեդիկ վիրահատություններից՝ օրինակ, ծնկային կամ կոնքազդրային հոդի էնդոպրոթեզավորումից հետո ոտքերի խորանիստ երակներում կարող են առաջանալ թրոմբներ (սա կոչվում է «խորանիստ երակների թրոմբոզ»):

Արյան հոսքի խանգարման պատճառով այս վիճակը կարող է


դրսևորվել, օրինակ՝ այտուցվածություն, ցավով, մաշկի գույնի փոփոխությամբ, սակայն, երբեմն հիվանդությունն առանց ախտանշանների է ընթանում:

Եթե ոտքերի խորանիստ երակներում թրոմբոզ մի մաս պոկվի և սրտի միջոցով անցնի թոքեր, կարող է առաջանալ շնչառության համար կարևոր նշանակության արյունատար անոթների խցանում:

**Այս վիճակը, որը կոչվում է «թոքային զարկերակի թրոմբոէմբոլիա», կարող է կյանքի համար վտանգ ներկայացնել և անհապաղ բժշկական օգնություն է պահանջում:**

Բարդությունների առաջացման ռիսկը կարող էք նվազեցնել բուժող բժշկի խորհուրդներին հետևելու դեպքում:

ՀԱԿԱՄԱԿԱՐԴԻՉՆԵՐԸ ՆՇԱՆԱԿՈՒՄ ԵՆ  
ԵՆԿԱՅԻՆ ԿԱՄ ԿՈՆՔԱՉԴՐԱՅԻՆ ՀՈՐԻ  
ՓՈԽԱՐԻՆՈՒՄԻՑ ՀԵՏՈ ԵՐԱԿԱՅԻՆ  
ԹՐՈՄԲՈՒՄԲՈՒԼԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՄԱՐ



Թոքային  
զարկերակների  
թրոմբոզերովիա

Խորանիստ երակների  
թրոմբոզ

Ստորին վերջույթների խոշոր օրթոպեդիկ վիրահատություններից հետո երակային թրոմբոէմբոլիայի կանխարգելման միջոցներից է հակամակարդիչների նշանակումը:

## **Կանխարգելումը ներառում է՝**

**Դեղեր** – հատուկ դեղեր՝ **հակամակարդիչներ**: Այն դեղերի ժամանակակից խումբ է, որը նվազեցնում է արյան մակարդումը և կանխում է արյան անոթներում թրոմբների առաջացումը:

**Հակամակարդիչները կարող են լինել երկու տեսակի.**

- ♦ **Ներարկային՝** – հեպարին կամ դրա ածանցյալներ, որոնք ներարկում են փորի մաշկի տակ օրական 1-4 անգամ:

- ◆ **Ներքին ընդունման՝** – դեղահատեր:  
Քսարելտոն (ռիվարոքսաբան)  
պատկանում է դրանց:

Ձեզ կարող են խորհուրդ տալ նաև **ոչ դեղային միջոցներ՝** հատուկ սեղմող տրիկոտաժ (առաձգական գուլպաներ կամ առաձգական վիրակապեր):



Անհրաժեշտ է հետևել բժշկի հրահանգներին՝ թրոմբոզոցայացումը կանխարգելելու նպատակով հակամակարոդիչներ կիրառելու դեպքում



# ԻՆՉ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱԼ ՔՍԱ- ՐԵԼՏՈ (ՌԻՎԱՐՕՔՍԱԲԱՆ) ԴԵՂԻ ՄԱՍԻՆ

---

Քսարելտոն (ռիվարոքսաբան) ներքին ընդունման ուղղակի հակամակարդիչ խմբի դեղ է, որը կիրառվում է արյան մակարդումը նվազեցնելու և թրոմբոզի առաջացումը կանխելու համար, որոնք կարող են Ձեր վիճակի կտրուկ վատթարացման կամ կյանքին սպառնացող բարդությունների առաջացման պատճառ դառնալ, ինչպիսիք են խորանիստ երակների թրոմբոզը կամ թոքային զարկերակների թրոմբոէմբոլիան:

Հակամակարդիչները, այդ թվում Քսարելտո (ռիվարոքսաբան) դե-

ըը, նշանակում են երակային թրոմբոէմբոլիկ բարդութիւնները կանխարգելելու համար:

Հակամակարդիչ բուժման նպատակով ռիվարոքսաբանի նշանակումը և բուժման տևողութիւնը որոշում է բուժող բժիշկը: Բուժումը կարող է տևել մինչև 5-6 շաբաթ՝ կախված վիրահատական միջամտութեան տեսակից:



Խնդրում ենք տեղեկացնել բուժող բժշկին Քսարելտոյի (ռիվարոքսաբան) հետ **միաժամանակ կիրառվող բոլոր այլ դեղերի մասին:**

Պարտադիր տեղեկացրեք բուժող բժշկին Քսարելտո (ռիվարոքսաբան) կիրառելու մասին՝ **Նախքան ցանկացած վիրահատական գործողություններ կամ ինվազիվ միջամտություն սկսելը** (ատամնաբուժական և էնդոսկոպիկ միջամտություններ, պոլսկցիաներ, բիոպսիաներ և այլն):

# ԻՆՉՊԵՍ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ՔՍԱՐԵԼՏՈ (ՌԻՎԱՐՕՔՍԱԲԱՆ) ԴԵՂԸ

---

- ◆ Կարևոր է պահպանել հաստատված դեղաչափման կարգը և բաց չթողնել Քսարելտոյի (ռիվարոքսաբան) հերթական դեղաչափի ընդունումը:
- ◆ 10 մգ Քսարելտո (ռիվարոքսաբան) դեղը պետք է ընդունել ըստ սխեմայի՝ 1 դեղահատ օրական մեկ անգամ, սննդի ընդունումից անկախ՝ բժշկի խորհրդին համապատասխան:
- ◆ Անհրաժեշտության դեպքում, Քսարելտոյի (ռիվարոքսաբան) 10 մգ դեղահատը կարելի է մանրացնել և խառնել ջրի կամ հեղուկ սննդի հետ՝ անմիջապես ընդունելուց առաջ:

- ◆ Եթե հերթական դեղաչափի ընդունումը բաց է թողնվում, ապա անհրաժեշտ է անհապաղ ընդունել Քսարելտոն (ռիվարոքսաբան) և հաջորդ օրը շարունակել դեղի կանոնավոր ընդունումը՝ բուժման որոշված կարգին համապատասխան: Չի կարելի օգտագործել կրկնակի դեղաչափ՝ բաց թողնված դեղաչափը լրացնելու նպատակով:



Խնդրում ենք մի որոշեք դադարեցնել Քսարելտո (ռիվարոքսաբան) դեղի օգտագործումն առանց բուժող բժշկի հետ խորհրդակցելու, քանի որ թրոմբոզների առաջացման ռիսկը կարող է կրկին առաջանալ՝ դեղի օգտագործումը դադարեցնելու դեպքում:

## ԵՐԲ ՊԵՏՔ Է ԴԻՄԵԼ ԲԺՇԿԻ

---

Շատ կարևոր է իմանալ հնարավոր կողմնակի ազդեցությունների մասին, եթե օգտագործում եք այնպիսի հակամակարդիչներ, ինչպիսին Քսարելտո (ռիվարօքսաբան) դեղն է:

**Արյունահոսությունն առավել հաճախ հանդիպող կողմնակի ազդեցությունն է:**

Ինքնուրույն մի վերսկսեք Քսարելտո (ռիվարօքսաբան) դեղի կիրառումն առանց բուժող բժշկի հետ խորհրդակցելու, եթե դեղի ընդունումը դադարեցվել է արյունահոսության պատճառով, քանի որ կարող է առաջանալ արյունահոսության լրացուցիչ ռիսկ, որի մասին բժիշկը կտեղեկանա Ձեզ հետ զրույցի արդյունքում:

## Պետք է դիմել բժշկի արյունահոսության ցանկացած ախտանիշների առկայության դեպքում, օրինակ.

- ◆ կապտուկներ, որոնք առաջանում են առանց պատճառի կամ աննշան վնասվածքների դեպքում, քթային արյունահոսություն, առատ արյունահոսություն լնդերից, արյունահոսություն կտրվածքներից, որոնք առավել երկար ժամանակ չեն դադարում, քան ընդհանրապես,
- ◆ սովորականից ավելի առատ դաշտան, դաշտանային արյունահոսություն կամ դաշտանադարի դեպքում արյունային արտադրություն հեշտոցից,
- ◆ վարդագույն կամ դարչնագույն մեզ, արյունոտ կամ սև կղանք,
- ◆ Կարյունախիտում (արյան կամ արյան մակարդուկի առկայություն հազի ժամանակ), արյունային փսխում կամ, «սուրճի մրուրի» նման փսխում,
- ◆ անբացատրելի ցավ,
- ◆ ցանկացած անբացատրելի այտուցներ կամ անհարմարավետության զգացողություն,
- ◆ անբացատրելի գլխացավ, գլխապտույտ և թուլություն:

# ԿԱՐԵՎՈՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

Վիրահատության  
ամսաթիվ \_\_\_\_\_

Ես ընդունում եմ **10 մգ** Քսարելտո (ռիվարոքսաբան):

Հակամակարդիչ բուժման տևողություն\*

Ստացիոնար  
բուժհաստատությունում

օր

Տանը՝

օր



Լշեք առաջին և հաջորդող օրերը, երբ Քսարելտոն ընդունել էք տանը

Երկ	Երք	Չոր	Հինգ	Ուրբ	Շբթ	Կիր

\*Բուժման տևողությունը որոշում է բժիշկը:



Այլ դեղեր՝

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

# ՊԼԱՆԱԿՈՐԿԱԾ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԺՇԿԻՆ

Ամսաթիվ

Մեկնաբանություններ


Քսարելտո (ռիվարոքսաբան) դեղի կիրառման ընթացքում առաջացած կողմնակի ազդեցությունների մասին խնդրում ենք հաղորդել բուժող բժշկին և/կամ ՀՀ ԱՆ ակադեմիկոս Է. Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն,

հեռ.՝ (+374 10) 20 05 05, (+374 96) 22-05-05 և/կամ «Բայեր» ընկերությանը, հեռ.՝ +7 495 231 1200 և +374 98 78 70 40 (աշխատանքային օրերին Մոսկվայի ժամանակով ժամը 8:00-ից մինչև 19:00-ը):

ԲԸ «Բայեր»,  
107113, Մոսկվա, 3-րդ Ռիբինսկայա փող., 18, շենք 2:

Հեռ.՝ +7 (495) 231 12 00  
[www.pharma.bayer.ru](http://www.pharma.bayer.ru)